ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

31 մայիսի 2021 թվական N 108

ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասովև հիմքընդունելով «Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետականբյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասը՝*որոշում եմ.*

1.ՀայաստանիՀանրապետության Արագածոտնի մարզպետարանի բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Այլ նպաստներ բյուջեից» հոդվածով նախատեսված ծախսերից սոցիալական աջակցության նպատակով 11 քաղաքացիների հատկացնել 930000/ինը հարյուր երեսուն հազար/ դրամ միանվագ օգնություն՝ համաձայն հավելվածի:

2.Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի գլխավոր ֆինանսիստին՝ հանձնարարել ՖՍՏՋ վարչության հաշվապահական հաշվառման բաժնին՝ օրենքով սահմանված կարգով, 5 օրյա ժամկետում կատարել գումարի վճարում:

X

ԴԱՎԻԹ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Подписано: GEVORGYAN DAVIT 3203910713

Դ.Գևորգյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2021թ. մայիսի 26-ին, N 107
ք. Աշտարակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 31-Ի N 70-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տարածքային կառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, 13-րդ հոդվածի 2-րդ մասով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասով, 33-րդ հոդվածի 1-ին մասով, <<Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին>> ՀՀ օրենքի 14-րդ հոդվածով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի <<Ապարանի Հ. Ոսկանյանի անվան հ. 2 հիմնական դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության կառավարման խորհրդի անդամ Կ. Առաքելյանի 2021 թվականի մայիսի 24-ի դիմումը՝ որոշում եմ.

1.Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի 2010 թվականի մայիսի 31-ի <<Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի հանրակրթական ուսումնական հաստատություններ պետական ոչ առևտրային կազմակերպություններում հաստատության կառավարման խորհուրդների կազմը հաստատելու մասին>> N 70-Ա որոշմամբ հաստատված հավելվածի <<Առանձին խորհուրդներ>> բաժնի 22-րդ կետում կատարել հետևյալ փոփոխությունը.

1) <<Ապարանի Հ. Ոսկանյանի անվան հ. 2 հիմնական դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության կառավարման խորհրդի կազմում <<Առաքելյան Կարապետ Արարատի>> բառերը փոխարինել <<Ստեփանյան Հակոբ Հրաչյայի>> բառերով:

5/26/2021

X

ԴԱՎԻԹ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Подписано: GEVORGYAN DAVIT 3203910713

Դ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2021թ. մայիսի 26-ին, N 106
ք. Աշտարակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 31-Ի N 70-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տարածքային կառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, 13-րդ հոդվածի 2-րդ մասով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասով, 33-րդ հոդվածի 1-ին մասով, <<Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին>> ՀՀ օրենքի 14-րդ հոդվածով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի <<Սասունիկի Գ. Չաուշի անվան միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության կառավարման խորհրդի անդամ Կ. Առաքելյանի 2021 թվականի մայիսի 24-ի դիմումը՝ որոշում եմ.

1.Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի 2010 թվականի մայիսի 31-ի <<Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի հանրակրթական ուսումնական հաստատություններ պետական ոչ առևտրային կազմակերպություններում հաստատության կառավարման խորհուրդների կազմը հաստատելու մասին>> N 70-Ա որոշմամբ հաստատված հավելվածի <<Առանձին խորհուրդներ>> բաժնի 12-րդ կետում կատարել հետևյալ փոփոխությունը.

1) <<Սասունիկի Գ. Չաուշի անվան միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության կառավարման խորհրդի կազմում <<Առաքելյան Կարապետ Արարատի>> բառերը փոխարինել <<Հարությունյան Վաչիկ Սարգսի>> բառերով:

X

ԴԱՎԻԹ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Подписано: GEVORGYAN DAVIT 3203910713

Դ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2021թ. մայիսի 25 **N 105**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 28-ի N 42-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԵՎ ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ կետով, 33-րդ հոդվածի 1-ին կետով, 34-րդ հոդվածի 1-ին կետով և հիմք ընդունելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ կետը՝

Ո ր ո շ ու մ ե մ՝

1. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի 2014 թվականի ապրիլի 28-ի թիվ 42-Ա որոշման 4-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ.

«Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության Արագածոտնի մարզային փրկարարական վարչության պետի վրա:»

2. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի 2014 թվականի ապրիլի 28-ի թիվ 42-Ա որոշմամբ հաստատված հավելված N 1-ում՝ «Արտակարգ իրավիճակներում Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի բնակչության պաշտպանության պլան»-ում կատարել հետևյալ փոփոխությունները.

1) I գլխի 3-րդ կետի 9-րդ ենթակետը շարադրել նոր խմբագրությամբ.

Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի «Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության կանոնադրությունը հաստատելու մասին» N 740-Լ որոշումը,

2) II գլխի 4-րդ կետի 8-րդ ենթակետը շարադրել նոր խմբագրությամբ.

ա) Արագածոտնի տարածաշրջանային պետական քոլեջ,

բ) 2 արհեստագործական ուսումնարան,

գ) 3 ավագ դպրոց,

դ) 83 միջնակարգ դպրոց,

ե) 34 հիմնական դպրոց,

զ) 41 նախադպրոցական հաստատություն,

է) 6 նախակրթարան,

3) II գլխի 4-րդ կետի 10-րդ ենթակետի «ա» պարբերությունը շարադրել նոր խմբագրությամբ.

«Մարզում գործում է ԱԻՆ պետական ռեզերվների գրասենյակի ենթակայության տակ գտնվող երկու պահեստներ:»,

4) II գլխի 5.1 կետի 2-րդ ենթակետը լրացնել նոր պարբերությամբ հետևյալ խմբագրությամբ.

«Եթե կառավարումը հնարավոր չէ իրականացնել ՀՀ Արտակարգ իրավիճակների հանրապետական հանձնաժողովի կողմից, Շիրակի մարզպետարանը ժամանակավորապես ստանձնում է երկրաշարժի հետևանքների վերացման աշխատանքների կառավարումը, իսկ

լիազոր մարմնի պարտականությունները՝ Շիրակի մարզային փրկարարական վարչությունը: Գործում է Շիրակի մարզի արտակարգ իրավիճակների հետևանքների վերացման հանձնաժողովը, որի նախագահն է Շիրակի մարզպետը: Արագածոտնի մարզային փրկարարական վարչության պետը կապ է հաստատում Շիրակի մարզի Արտակարգ իրավիճակների հետևանքների վերացման հանձնաժողովի հետ և սկսում է աղետի հետևանքների վերացման գործընթացը՝ մինչև ՀՀ Արտակարգ իրավիճակների հանրապետական հանձնաժողովի վերականգնումը:»,

5) II գլխի 5.1 կետի 6-րդ ենթակետը «բ» պարբերությունում «հինգ» բառը փոխարինել «վեց» բառով,

6) II գլխի 5.2 կետի 5-րդ ենթակետում «բնական» բառից հետո ավելացնել «և տեխնածին» բառերը,

7) III գլխի 6.1 կետի «դ» պարբերությունը շարադրել նոր խմբագրությամբ.

«Մարզի Արտակարգ իրավիճակների հանձնաժողովին կից ստեղծվում են աշխատանքային խմբեր՝ ըստ անհրաժեշտության»,

8) III գլխի 6.3 կետի «ը» պարբերությունը շարադրել նոր խմբագրությամբ.

«ԱԻ հանձնաժողովի անդամները կատարված աշխատանքների վերաբերյալ պարբերաբար զեկուցում են մարզի ԱԻ-ում գործող մշտական հանձնաժողովի նախագահին, մարզային փրկարարական վարչության պետին, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2017թ. ապրիլի 6-ի «Հայաստանի Հանրապետության տարածքում արտակարգ իրավիճակների առաջացման կամ դրա սպառնալիքի, Հայաստանի Հանրապետության վրա զինված հարձակման, դրա անմիջական վտանգի առկայության կամ պատերազմ հայտարարելու դեպքում ու ռազմական դրության պայմաններում պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների, բնակչության ազդարարման և իրազեկման կարգը սահմանելու մասին» 346-Ն որոշման»,

9) III գլխի 6.3 կետի «թ» պարբերությունը շարադրել նոր խմբագրությամբ.

«Մարզի տարածքում տեղեկատվության հաղորդումն իրականացվում է համաձայն «ը» պարբերությունում նշված որոշման»,

10) IV-րդ գլխի 13-րդ կետի 3-րդ ենթակետում «ՀՀ կապի և տրանսպորտի նախարարության» բառերը փոխարինել «ՀՀ տրանսպորտի ոլորտը համակարգող լիազոր մարմնի» բառերով,

11) IV-րդ գլխի 16-րդ կետի 1-ին ենթակետում «Մարզպետարանի լրատվական բաժինը» բառերը փոխարինել «Մարզպետարանի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի ոլորտը համակարգող կառուցվածքային ստորաբաժանումը» բառերով,

12) IV գլխի 17-րդ կետի 1-ին ենթակետը շարադրել նոր խմբագրությամբ.

«Մարզի հիդրոօդերևութաբանական ապահովման համար պատասխանատու է ՀՀ հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի ոլորտը համակարգող լիազոր մարմնի մարզային ստորաբաժանումները:»,

13) IV գլխի 18-րդ կետի 1-ին ենթակետը շարադրել նոր խմբագրությամբ.

«Սննդի և նյութատեխնիկական ապահովումն իրականացվում է մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման ոլորտները համակարգող կառուցվածքային ստորաբաժանման ուժերով և միջոցներով:»

3. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի 2014 թվականի ապրիլի 28-ի թիվ 42-Ա որոշմամբ հաստատված հավելված N 7-ում՝ «Գարնանային վարարումների, ջրհեղեղների և սելավների դեպքում Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի գործելու պլան»-ում կատարել հետևյալ փոփոխությունը.

1) 1-ին կետի 4-րդ ենթակետից հանել «բ» պարբերությունը:

X

ԴԱՎԻԹ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Подписано: GEVORGYAN DAVIT 32039307[illegible]

Դ.Գևորգյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

2021թ. Մայիսի 20 N 104

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2008 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 1-Ի N 22-Ա ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասով և 34-րդ հոդվածի 4-րդ մասով, ***որոշում եմ՝***

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի 2008 թվականի ապրիլի 1-ի <<Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող մարզային հանձնաժողովի անհատական կազմը հաստատելու մասին>> N 22-Ա կարգադրությամբ հաստատված հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

X

ԴԱՎԻԹ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Подписано: GEVORGYAN DAVIT 3203910713

Դ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

Հավելված
ՀՀ Արագածոտնի մարզպետի
2021 թվականի մայիսի 20 N 104 որոշման

Կազմ
Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող մարզային հանձնաժողովի

Դ. Գևորգյան-- ՀՀ Արագածոտնի մարզպետ **/հանձնաժողովի նախագահ** /

Կ.Թաթուլյան ՀՀ Արագածոտնի մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության սոցիալական ապահովության բաժնի պետ **/հանձնաժողովի քարտուղար/**

Հանձնաժողովի անդամներ՝

Մ.Շահազիզյան-- ՀՀ Արագածոտնի մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության առողջապահության բաժնի պետ

Ս.Սողոմոնյան-- ՀՀ Արագածոտնի մարզպետարանի կրթության, մշակույթի եւ սպորտի վարչության պետ

Լ.Ղարիբյան-- ՀՀ Արագածոտնի մարզպետարանի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի պետ

Հ.Ստեփանյան--ՀՀ Արագածոտնի մարզպետարանի քաղաքաշինության վարչության պետ

Հ.Ասատրյան-- ՀՀ Արագածոտնի մարզպետարանի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետ

Ն. Գալստյան-- ՀՀ Արագածոտնի -մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ

Գ. Պողոսյան--- ՀՀ Արագածոտնի մարզպետարանի զարգացման ծրագրերի, զբոսաշրջության և վերլուծության բաժնի պետ

Ա.Սարգսյան— ՀՀ Միասնական սոցիալական ծառայության Աշտարակի տարածքային կենտրոնի տնօրեն,

Ա.Եղիազարյան-- ՀՀ Արագածոտնի մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության սոցիալական ապահովության բաժնի գլխավոր մասնագետ,

Ա. Ազիզյան—Աշտարակի քաղաքապետարանի կրթության և մշակույթի բաժնի կրտսեր մասնագետ,

Ռ.Հարությունյան-- <<Վորլդ Վիժն Հայաստանի>> Ապարանի տարածքային գրասենյակի համակարգող/համաձայնությամբ/ ,

Ժ. Ավետիսյան-- <<Արայի>> հաշմանդամ երեխաների ծնողների հասարակական կազմակերպության նախագահ /համաձայնությամբ/,

Ա.Հովհաննիսյան-- <<Ծիծեռնակ>> հաշմանդամ երեխաների ծնողների հասարակական կազմակերպության նախագահ /համաձայնությամբ/,

Ս.Այվազյան-- <<Հայաստանի կույրերի միավորման>> Աշտարակի կույրերի սկզբնական կազմակերպության նախագահ /համաձայնությամբ/

ՀՀ Արագածոտնի մարզպետարանի
գլխավոր քարտուղար

X

ՀՐԱՉՅԱ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Подписано: GEVORGYAN HRACHYA 2014650144

Հ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

2021թ. մայիսի 19-ին, N 103
ք. Աշտարակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ <<ՁՈՐԱԳԼԽԻ ՅՈՒ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ>> ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ԿԱՐԵՆ ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՏՈՒՅԺԻ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 220-րդ հոդվածով, 223-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 224-րդ, 226-րդ հոդվածների պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության 2021 թվականի ապրիլի 6-ի N 36/36.3/4292-2021 գրությամբ ներկայացված միջնորդագիրը, Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ Ս. Սողոմոնյանի 2021 թվականի մայիսի 18-ի զեկուցագիրը և <<Ձորագլխի Յու. Հովհաննիսյանի անվան միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Կ. Սողոմոնյանի 2021 թվականի մայիսի 17-ի բացատրությունը՝ ***որոշում եմ.***

Աշխատանքային պարտականությունները ոչ պատշաճ կատարելու համար Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի <<Ձորագլխի Յու. Հովհաննիսյանի անվան միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Կարեն Անուշավանի Սողոմոնյանին հայտարարել խիստ նկատողություն:

X

ԴԱՎԻԹ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Подписано: GEVORGYAN DAVIT 3203910713

Դ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

2021թ. մայիսի 19

N 102

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՈՒՄ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԵՎ ԱՌԱՆՁԻՆ (ՀԱՏՈՒԿ) ԽՄԲԵՐԻ ՑԱՆԿՈՒՄ ՉԸՆԴԳՐԿՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԱՆՎՃԱՐ ԿԱՄ ԱՐՏՈՆՅԱԼ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՎ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ՍՏԱՆԱԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՇՏԱՐԱԿԻ, ԱՊԱՐԱՆԻ, ԹԱԼԻՆԻ ԵՎ ԾԱՂԿԱՀՈՎԻՏԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՈՒՂԵԳՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԿԱԶՄԵՐԸ ԵՎ ԱՇԽԱՏԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 15-Ի N28-Ա ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով "Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման մասին" օրենքի 14-րդ հոդվածի 1-ին կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի մարտի 4-ի N318-Ն որոշման հավելված 2-ի 9.1 կետը՝ **որոշում եմ.**

1. Հաստատել՝

1) Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի բնակչության սոցիալապես անապահով և առանձին (հատուկ) խմբերի ցանկում չընդգրկված անձանց անվճար կամ արտոնյալ պայմաններով բժշկական օգնություն և սպասարկում ստանալու նպատակով ուղեգրող հանձնաժողովների աշխատակարգը՝ համաձայն N1 հավելվածի,

2) Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի բնակչության սոցիալապես անապահով և առանձին (հատուկ) խմբերի ցանկում չընդգրկված անձանց անվճար կամ արտոնյալ պայմաններով բժշկական օգնություն և սպասարկում ստանալու նպատակով ուղեգրող հանձնաժողովների կազմերը՝ համաձայն N2 հավելվածի:

2.Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի 2018 թվականի մարտի 15-ի N28-Ա կարգադրությունը:

X

ԴԱՎԻԹ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Դ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

Подписано: GEVORGYAN DAVIT 3203310713

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2021թ. մայիսի 19 -ին, N 101
ք.Աշտարակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԶՈՐԱՀԱՎԱՔԱՅԻՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, «Կառավարչական իրավահարաբերությունների մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 4-րդ մասով և հիմք ընդունելով վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակի 2021 թ մայիսի 7-ի N 02/45.1/14974-2021 գրությունը՝ *որոշում եմ.*

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի 2014 թվականի մարտի 12-ի թիվ 24-Ա որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի զորահավաքային նախապատրաստության բաժնի» կանոնադրությունում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1.Կանոնադրության ամբողջ տեքստում «մարզպետարանի Աշխատակազմ» բառերը փոխարինել «մարզպետարան» բառերով, «աշխատակազմի ղեկավար» բառերը՝ «գլխավոր քարտուղար» բառերով:

2. 4-րդ բաժնի գործառույթները շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

X

ԴԱՎԻԹ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Подписано: GEVORGYAN DAVIT 3203910713

Դ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N --100--

18 մայիսի 2021թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ 100 ՏՈԿՈՍ ՊԵՏՈՒԹՅԱՆԸ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԲԱԺՆԵՄԱՍ ՈՒՆԵՑՈՂ «ԾԱՂԿԱՀՈՎԻՏԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԿԱՋՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՎՃԱՐՈՎԻ ՍԿԶԲՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՀԻՎԱՆԴԱՆՈՑԱՅԻՆ, ԱՐՏԱՀԻՎԱՆԴԱՆՈՑԱՅԻՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԻ ՈՒ ՍԱԿԱԳՆԵՐԻ ՑՈՒՑԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՅՈՒՑԱԿԸ ՈՒ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՀԱՇԻՎԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» օրենքի 16-րդ հոդվածի 11-րդ մասի 3-րդ կետով, «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքի 83-րդ հոդվածի 1-ին մասով, 84-րդ հոդվածի 1-ին մասի «իբ»-«իդ» կետերով, հաշվի առնելով «Ծաղկահովիտի առողջության կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրենի 10 մայիսի 2021թվականի թիվ 44 և 17 մայիսի 2021 թվականի թիվ 49 գրությունը, որոշում եմ.

1. Հաստատել՝

«Ծաղկահովիտի առողջության կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության 2021թվականի՝

1.1. եկամուտների և ծախսերի նախահաշիվը համաձայն N1 հավելվածի

1.2. հաստիքացուցակը՝ համաձայն N2 հավելվածի

1.3. վճարովի սկզբունքով տրամադրվող ծառայությունների, հիվանդանոցային, արտահիվանդանոցային բժշկական օգնության և սպասարկման տեսակների ու սակագների ցուցակը համաձայն N3 հավելվածի

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և տարածվում է 2021 թվականի հունվարի 1-ից սկսած իրավահարաբերությունների վրա:

ԳՐԻՉ

X

ԴԱՎԻԹ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Подписано: GEVORGYAN DAVIT 3203810713

Դ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

2021թ. մայիսի 18 թիվ 99

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 15-Ի ԹԻՎ 53-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով "Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման մասին" օրենքի 4-րդ հոդվածի 14-ի 1-ին կետի **որոշում եմ.**

Հաստատել՝ Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզում արտաընդերային ճանապարհով փոխանցվող վիրուսային հեպատիտների կանխարգելումն ապահովող մասնագիտական հանձնաժողովի փոփոխված կազմը՝ համաձայն հավելվածի:

X

ԴԱՎԻԹ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Подписано: GEVORGYAN DAVIT 3203910713

ՊԳԵՎՈՐԳՅԱՆ

Հավելված
Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի
2021 թվականի մայիսի 18 թիվ 99 որոշման

ԿԱԶՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՈՒՄ ԱՐՏԱԸՆԴԵՐԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՈՎ ՓՈԽԱՆՑՎՈՂ ՎԻՐՈՒՍԱՅԻՆ ՀԵՊԱՏԻՏՆԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

Հ. Գուլյան - Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի տեղակալ (հանձնաժողովի նախագահ)

Մ. Շահազիզյան - Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության առողջապահության բաժնի պետ (հանձնաժողովի քարտուղար)

Ա. Հովհաննիսյան - Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի «Աշտարակի բժշկական կենտրոն» ՓԲԸ տնօրեն

Հ. Շմավոնյան - Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի «Ապարանի բժշկական կենտրոն» ՓԲԸ տնօրեն

Ս. Ավագյան - Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի «Թալինի բժշկական կենտրոն» ՓԲԸ տնօրեն

Ա. Հակոբյան - Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի «Ծաղկահովիտի առողջության կենտրոն» ՓԲԸ տնօրեն

ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

X

ՀՐԱՉՅԱ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Подписано: GEVORGYAN HRACHYA 20146501443

Հ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

2021թ. մայիսի 17-ին, N 98
ք. Աշտարակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ <<ՄԱՍՏԱՐԱՅԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ>> ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐԱՊԵՍ ԳՈՀԱՐ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ՎՐԱ ԴՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տարածքային կառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N 1392-Ն որոշմամբ հաստատված կարգի 3-րդ հավելվածի 69-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի «Մաստարայի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Աննա Արսենյանի կողմից ներկայացված 2021 թվականի մայիսի 7-ի AF N 178217 անաշխատունակության թերթիկը և 2021 թվականի մայիսի 10-ի դիմումը, ***որոշում եմ***.

2021 թվականի մայիսի 10-ից Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի «Մաստարայի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունները ժամանակավորապես դնել ուսումնական գծով փոխտնօրեն Գոհար Խաչատրյանի վրա՝ մինչև հիմքի վերացումը:

X

ԴԱՎԻԹ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Подписано: GEVORGYAN DAVIT 3203910713

Դ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2021թ. մայիսի 17 **N 97**

ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՈՒՄ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՏԱՐԱՀԱՆՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ, ՏԱՐԱՀԱՆՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 17-Ի ԹԻՎ 53-Ա ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տարածքային կառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի օգոստոսի 18-ի N 1180-Ն որոշման հավելվածի 31-րդ կետի 1-ին ենթակետի, 32-րդ կետի և 33-րդ կետի 3-րդ ենթակետի պահանջները.

Ո ր ո շ ու մ ե մ՝

1. Հաստատել՝

1) Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի տարահանման հանձնաժողովի կանոնադրությունը համաձայն N 1 հավելվածի:

2) Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի տարահանման հանձնաժողովի կազմը համաձայն N 2 հավելվածի:

3) Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի տարահանման հանձնաժողովի աշխատանքային խմբերի կազմը համաձայն N 3 հավելվածի:

2. Առաջարկել Արագածոտնի մարզի համայնքների ղեկավարներին, ճշգրտել համայնքային տարահանման պլանները, համայնքային տարահանման հանձնաժողովների կանոնադրությունները, տարահանման մարմինների վարչակազմերի գործառնական պարտականությունները և փաստաթղթերը:

3. ՈՒԺը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի 2013 թվականի հունիսի 17-ի <<Արագածոտնի մարզում բնակչության տարահանման հանձնաժողով ստեղծելու մասին>> թիվ 53-Ա կարգադրությունը:

4. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի տեղակալին,

5. Սույն որոշումը հայտարարել ըստ առնչության:

X

ԴԱՎԻԹ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Подписано: GEVORGYAN DAVIT 3203910713

Դ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2021թ. մայիսի 17-ին, N 96
ք.Աշտարակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 31-Ի N 70-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասով, 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2010 թվականի մարտի 18-ի N 113-Ն հրամանը՝ **որոշում եմ.**

1.Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի 2010 թվականի մայիսի 31-ի <<Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի հանրակրթական ուսումնական հաստատություններ պետական ոչ առևտրային կազմակերպություններում հաստատության կառավարման խորհուրդների կազմը հաստատելու մասին>> N 70-Ա որոշմամբ հաստատված հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

X

ԴԱՎԻԹ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Подписано: GEVORGYAN DAVIT 3203910713

Դ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

2021թ. մայիսի 17-ին, N 95
ք. Աշտարակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԻ ՕԳՆԱԿԱՆ ՄԵՐԻ ՀՈՎԻԿԻ ԲԱԴԱԼՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԱՐՁԱԿՈՒՐԴԻ ՄԻ ՄԱՍԸ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տարածքային կառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 158-րդ հոդվածով, 159-րդ հոդվածի 1-ին մասով, 163-րդ հոդվածով, <<Հանրային ծառայության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 19-րդ մասով և հիմք ընդունելով Մ. Բադալյանի 2021 թվականի մայիսի 17-ի դիմումը՝ ***որոշում եմ***.

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի օգնական Մերի Բադալյանին տրամադրել ամենամյա նվազագույն արձակուրդի չօգտագործած մասը՝ 2019 թվականի դեկտեմբերի 15-ից 2020 թվականի դեկտեմբերի 15-ն ընկած ժամանակահատվածի համար՝ 2 աշխատանքային օր տևողությամբ և ամենամյա նվազագույն արձակուրդի մի մասը՝ 2020 թվականի դեկտեմբերի 15-ից 2021 թվականի դեկտեմբերի 15-ն ընկած ժամանակահատվածի համար՝ 8 աշխատանքային օր տևողությամբ, 2021 թվականի մայիսի 17-ից մայիսի 31-ը ներառյալ:

X

ԴԱՎԻԹ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Подписано: GEVORGYAN DAVIT 3203910713

Դ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2021թ. մայիսի 13

N 94

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 28-Ի N 42-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԼԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ կետով, 33-րդ հոդվածի 1-ին կետով, 34-րդ հոդվածի 1-ին կետով և հիմք ընդունելով <<Տարածքային կառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ կետը՝

Ո ր ո շ ու մ ե մ՝

1. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի 2014 թվականի ապրիլի 28-ի N 42-Ա որոշմամբ հաստատված հավելված N 1-ում՝ <<Արտակարգ իրավիճակներում Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի բնակչության պաշտպանության պլան>>-ում կատարել հետևյալ փոփոխությունները.

1) I գլխի 3-րդ բաժինը շարադրել նոր խմբագրությամբ.

<<3. Պլանի իրավական հիմքերն են՝

1) Հայաստանի Հանրապետության օրենքը <<Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին>>,

2) Հայաստանի Հանրապետության օրենքը <<Սեյսմիկ պաշտպանության մասին>>,

3) Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հունիսի 10-ի <<Ուժեղ երկրաշարժի դեպքում Հայաստանի Հանրապետության բնակչության պաշտպանության կազմակերպման պլանը հաստատելու մասին>> N919-Ն որոշումը,

4) Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի օգոստոսի 18-ի <<Վտանգավոր տարածքից բնակչության տարահանման կարգը հաստատելու մասին>> N 1180-Ն որոշումը,

5) Հայաստանի Հանրապետության կառավարության 2010թ. հունիսի 24-ի <<Տարահանված բնակչորթյան տեղաբաշխման տեղամասերում կենսապահովման կարգը հաստատելու մասին>> N 824-Ն որոշումը,

6) Հայաստանի Հանրապետության կառավարության 2017թ. ապրիլի 6-ի <<Հայաստանի Հանրապետության տարածքում արտակարգ իրավիճակների առաջացման կամ դրա սպառնալիքի, Հայաստանի Հանրապետության վրա զինված հարձակման, դրա անմիջական վտանգի առկայության կամ պատերազմ հայտարարելու դեպքում ու ռազմական դրության պայմաններում պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների, բնակչության ազդարարման և իրազեկման կարգը սահմանելու մասին>> 346-Ն որոշումը,

7) Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի մարտի 19-ի <<Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության աշխատակազմ>> պետական կառավարչական հիմնարկ ստեղծելու, Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության կանոնադրությունը և աշխատակազմի կառուցվածքը հաստատելու մասին>> N279-Ն որոշումը,

8) Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հուլիսի 8-ի <<Որոնողափրկարարական աշխատանքների կազմակերպման կարգը հաստատելու մասին>> N855-Ն որոշումը:>>

2) II գլխի 4-րդ բաժնի 2-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ.

<<2) **ՄԱՐԶԻ ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԱՆՈՒՄԸ, ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԸ, ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԹԻՎԸ՝ ԸՍՏ ՏԱՐԻՔԱՅԻՆ ԽՄԲԵՐԻ**

Մարզը կազմավորվել է 1996թ. նախկին Աշտարակի, Ապարանի, Արագածի և Թալինի վարչական շրջանների միավորումից: Զբաղեցնում է 2753 քառ. կմ տարածք: Բնակչության միջին խտությունը կազմում է՝ 50 մարդ/քառ.կմ: Մարզի բնակչության թվաքանակը կազմում է 137790 մարդ, որից՝ քաղաքային համայնքներում 35782 մարդ, գյուղական համայնքներում 102008 մարդ, ըստ տարիքի՝ 0-1.5 տարեկան 2412, 1.5-7 տարեկան 9898, 7-16 տարեկան 16474, 16-62 տարեկան 91667, 63 տարեկան և բարձր 17339 մարդ, ըստ սեռի՝ 67468 կին, 70322 տղամարդ: Առավել խիտ է բնակեցված մարզի հարավ-արևմտյան հատվածը /Աշտարակի տարածաշրջան/: Մարզը սահմանակից է արևմուտքից՝ 23 կմ սահմանագծով Թուրքիային, հյուսիսից՝ Շիրակի և Լոռու մարզերին, արևելքից՝ Կոտայքի մարզին, հարավից՝ Արմավիրի մարզին, հարավ-արևելքից Երևանին: Վարչական կենտրոնը Աշտարակ քաղաքն է:>>

3) II գլխի 4-րդ բաժնի 3-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ.

<<3) **ՄԱՐԶԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ**

ա. Արագածոտնի մարզը գտնվում է Հայաստանի Հանրապետության արևմտյան հատվածում,

բ. մարզի տարածքում կազմավորված է 72 համայնք՝ ընդհանուր թվով 114 բնակավայրով, որից՝ 3 քաղաքային, 111 գյուղական: Ըստ վիճակագրական բազայի՝ մարզի բնակելի տների քանակը կազմում է 30743, իսկ բազմաբնակարան շենքերի քանակը՝ 1088 միավոր,

գ. մարզի տարածքում գտնվում են՝ <<Նաիրի Լենդ>> ՍՊԸ, <<Աշտարակի պտուղ բանջարեղենի գրասենյակ>> ՓԲԸ, <<Թամարա Ֆրուտ>> ՓԲԸ քիմիապես վտանգավոր օբյեկտները և տարածքում գործող կարևորագույն նշանակության թվով 373 կազմակերպություններ՝ ինչպես նաև Ապարանի, Հալավարի և Կաքավաձորի բարձր

վտանգավորություն ներկայացնող և 15 փոքր վտանգավորության ջրամբարները, <<Էներգիա>> ՍՊԸ <<Ապարան-Երևան>> ջրանցքի փոքր հիդրոէլեկտրակայանը (1648 ԿՎտ դրվածքային հզորության),

դ. մարզի կենսաապահովման ձեռնարկություններն են՝ <<Գազպրոմ Արմենիա>> ՓԲԸ Արագածոտնի ԳԳՄ-ն՝ իր բարձր, ցածր և միջին ճնշման ընդհանուր 1087 կմ երկարությամբ խողովակաշարերով, <<Հայաստանի էլեկտրական ցանցեր>> ՓԲԸ <<Մուսալեռ>> մասնաճյուղի Աշտարակի, Ապարանի, Թալինի էլեկտրոցանցերը՝ իրենց բարձր և ցածր լարման ընդհանուր 997 կմ երկարությամբ վերգետնյա և 7 կմ երկարությամբ ստորգետնյա էլեկտրահաղորդման գծերով և 15972 հենասյուներով, <<Վեոլիա Ջուր>> ՓԲԸ-ի Աշտարակի, Ապարանի, Թալինի տեղամասերը՝ իրենց բարձր և ցածր ճնշման ընդհանուր 124 կմ երկարությամբ ներհամայնքային խողովակաշարերով,

ե. մարզում զարգացած ճյուղերից է գյուղատնտեսությունը՝ հիմնականում անասնաբուծությունը: Անասնագլխաքանակը կազմում է՝ խոշոր եղջերավոր անասուններ 71057 գլուխ, մանր եղջերավոր անասուններ 87237 գլուխ, խոզեր 15297 գլուխ, թռչուններ 488277 թև:>>

4) II գլխի 4-րդ բաժնի 4-րդ կետի ա՝ ենթակետի առաջին նախադասությունը շարադրել նոր խմբագրությամբ.

<<ա՝ մարզի տարածքը արևմտյան հատվածով հատում է հանրապետության գլխավոր երկաթուղին՝ շուրջ 30 կմ, Արագածավան և Արտենի կայարաններով:>>

5) II գլխի 4-րդ բաժնի 5-րդ կետի 2-րդ ենթակետում <<Աշտարակ կաթ ՓԲԸ>> բառերը փոխարինել <<<<Նաիրի Լենդ>> ՍՊԸ>> բառերով:

6) II գլխի 4-րդ բաժնի 6-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ.

<<6) ՎՏԱՆԳԱՎՈՐ ՀԻԴՐՈՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԸ՝

ա. Արագածոտնի մարզում առկա է 30 ջրամբար, սակայն ոչ բոլորն են գործում,

բ. գործող ջրամբարներից 18-ը՝ Ապարանի, Հալավարի, Ծիլքարի, Վ.Սասնաշենի, Ն.Սասնաշենի, Հացաշենի, Կաքավաձոր 2, Շենիկի, Կաթնաղբյուր 1, Դավթաշենի, Աշնակ 1, Վ՝Թալին 1, Վ.Բազմաբերդի, Ագարակավանի, Ոսկեթասի, Իրինդի, Կոշի, Շղարշիկի ջրանբարները գնահատվում են վտանգավոր, որոնցից առավել վտանգավոր են 3-ը՝ Ապարանի, Հալավարի և Կաքավաձորի 2 ջրամբարները:>>

7) II գլխի 4-րդ բաժնի 7-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ.

<<7) ՀՐԴԵՀԱՊԱՅԹՅՈՒՆԱՎՏԱՆԳ ՕԲՅԵԿՏՆԵՐԸ.

ա. բենզալցակայաններ՝ 36 հատ, որից Աշտարակի տարածաշրջանում՝ 20 հատ, Ապարանի տարածաշրջանում՝ 5 հատ, Թալինի տարածաշրջանում՝ 11 հատ,

բ. հեղուկ (ՀԳԼՃԿ) և բնական (ԱԳԼՃԿ) գազի ավտոգազալցակայաններ՝ 58 հատ, որից Աշտարակի տարածաշրջանում՝ 30 հատ, Ապարանի տարածաշրջանում՝ 12 հատ, Արագածի տարածաշրջանում՝ 4 հատ, Թալինի տարածաշրջանում՝ 12 հատ:>>

8) II գլխի 5-րդ բաժնի 5՝1՝ ենթաբաժնի 2-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ.

<<2) ՈՒԺԵՂ ԵՐԿՐԱՇԱՐԺԻ ԴԵՊՔՈՒՄ ՀՆԱՐԱՎՈՐ ԻՐԱՎԻՃԱԿԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ.

ա. համաձայն MSK-64 սանդղակի Գառնի էպիկենտրոնով՝ $\lambda=44^0 80'$, $\varphi=40^0 10'$, M=7.0, H=15 կմ (10-11 բալ), աղետալի երկրաշարժի 7-8 բալանոց գոտում կհայտնվեն Արագածոտնի մարզի 15 բնակավայրեր՝ Աշտարակ, Մուղնի, ՈՒշի, Օհանավան, Արտաշավան, Հարթավան,

Շողակն, Վարդենուտ, Վարդենիս, Ծաղկաշեն, Արագած, Քուչակ, Եղիպատրուշ, Շենավան, Կարբի,

բ. ավերիչ երկրաշարժի ազդեցության գոտում կհայտնվեն 5152 շենքեր և շինություններ, որոնցում բնակվում է 41714 մարդ,

գ. բնակչության շրջանում ընդհանուր կորուստները կկազմեն 3256 մարդ, որոնցից անվերադարձ՝ 1870 մարդ, սանիտարական՝ 1386 մարդ, այդ թվում՝ ծանր վիրավորներ՝ 698 մարդ, միջին ծանրության վիրավորներ՝ 374 մարդ և թեթև վիրավորներ՝ 313 մարդ,

դ. երկրաշարժի հետևանքով կստեղծվի հետևյալ ինժեներական իրավիճակը՝ վնասված շենքեր՝ 5152 հատ, որոնցից 1-ին կարգ՝ թեթև վնասվածք կստանա 46 շինություն, 2-րդ կարգ՝ միջին վնասվածք կստանա 420 շինություն, 3-րդ կարգ՝ ծանր վնասվածք կստանա 429 շինություն , 4-րդ կարգ՝ մասամբ կքանդվի 1559 շինություն, 5-րդ կարգ՝ լրիվ կփլվի 2698 շինություն,

ե. խոշոր հրդեհներ՝ 5 հատ, խոշոր վթարներ կոմունալ-էներգետիկ ցանցում՝ 20 հատ, փլվածքներով փակված փողոցներ՝ 37 կմ, փլատակների մակերեսը կկազմի 78518 մ^2, իսկ ծավալը՝ 6687325 մ^3,

զ.ուժեղ երկրաշարժի դեպքում մարզի բնակչության պաշտպանությունը կազմակերպվում է Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի 2014թ. ապրիլի 28-ի N 42-Ա որոշմամբ հաստատված հավելված 3-ի՝ <<ՈՒժեղ երկրաշարժի դեպքում Հայաստանի Հանրապետությաան Արագածոտնի մարզի բնակչության պաշտպանության կազմակերպման պլան>>-ի համաձայն:>>

9) II գլխի 5-րդ բաժնի 5□1□ ենթաբաժնի 3-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ.

<<3) ՀՐԴԵՀԱՊԱՅԹՅՈՒՆԱՎՏԱՆԳ ՕԲՅԵԿՏՆԵՐՈՒՄ ԽՈՇՈՐ ՀՐԴԵՀԻ ԿԱՄ ՊԱՅԹՅՈՒՆԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ՀՆԱՐԱՎՈՐ ԻՐԱՎԻՃԱԿԸ.

ա. հրդեհապայթյունավտանգ օբյեկտների դասին են պատկանում մարզում գործող՝ ընդհանուր թվով 94 հատ, բենզալցակայանները և գազալցակայանները,

բ. այս օբյեկտներում վթարների ժամանակ կարող է ստեղծվել բարդ հրդեհային և պայթյունավտանգ իրավիճակ:>>

10) II գլխի 5-րդ բաժնի 5□1□ ենթաբաժնի 4-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ.

<<4) ՋՐԱՄԲԱՐԻ ՊԱՏՎԱՐԻ ՓԼՈՒԶՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ՀՆԱՐԱՎՈՐ ԱՂԵՏԱԼԻ ՋՐԱԾԱԾԿՄԱՆ ԳՈՏՈՒՄ ՀԱՅՏՆՎՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԸ.

ա□ Ապարանի, Հալավարի, Ծիլքարի, Վ.Սասնաշենի, Ն.Սասնաշենի, Հացաշենի, Կաքավաձոր 2, Շենիկի, Կաթնաղբյուր 1, Դավթաշենի, Աշնակ 1, Վ□Թալին 1, Վ.Բազմաբերդի, Ագարակավանի, Ոսկեթասի, Իրինդի, Կոշի, Շղարշիկի ջրանբարների պատվարների փլուզման դեպքում հնարավոր է բնակելի, հասարակական, արտադրական տարածքների և ցանքատարածքների աղետալի ջրածածկում,

բ□ աղետալի ջրածածկման գոտում, ամբողջությամբ կամ մասնակի, կհայտնվեն Ապարան, Վարդենիս, Գեղարոտ, Վ.Սասնաշեն, Ն.Սասնաշեն, Հացաշեն, Կաքավաձոր, Ագարակավան, Արուճ, Շամիրամ, Մաստարա, Կաթնաղբյուր, Դավթաշեն, Աշնակ, Թալին, Վ.Բազմաբերդ, Ն.Բազմաբերդ, Կարմրաշեն, Իրինդ, Արագածոտն, Շղարշիկ, Եղնիկ բնակավայրերը՝ ընդհանուր թվով 9008 մարդ, ինչպես նաև Արմավիրի մարզի որոշ բնակավայրեր:>>

11) II գլխի 5-րդ բաժնի 5□1□ ենթաբաժնի 7-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ.

<<7) **ՔԱՐԱԹԱՓՈՒՄՆԵՐԻ, ՓԼՈՒԶՈՒՄՆԵՐԻ, ՆՍՏՎԱԾՔԱՅԻՆ ԵՐԵՎՈՒՅԹՆԵՐԻ ՕՋԱԽՆԵՐԸ.**

ա. մարզում առկա են փլուզման և քարաթափման 7 վտանգավոր տեղամասեր, որոնք գտնվում են Աշտարակ քաղաքի, Ապարան համայնքի Երնջատափ բնակավայրի, Օհանավան, Կարբի և Աղձք համայնքների տարածքներում,

բ. Աշտարակ քաղաքի տարածքում առկա են փլուզման և քարաթափման երկու տեղամասեր՝ Աբովյան փողոց (Քասաղի կիրճ տանող ճանապարհ, լանջի պարամետրերն են՝ թեքությունը 70^0-80^0, բարձրությունը 30 մ, երկարությունը 100 մ, հնարավոր փլուզման ենթակա զանգվածի պարամետրերն են՝ խորությունը 2 մ, լայնությունը 30 մ, երկարությունը 60 մ, ծավալը 3600 $մ^3$), Երևանյան փողոց (լանջի պարամետրերն են՝ թեքությունը 60^0-70^0, բարձրությունը 5 մ, երկարությունը 30 մ, հնարավոր փլուզման ենթակա զանգվածի պարամետրերն են՝ խորությունը 2 մ, լայնությունը 3 մ, երկարությունը 15 մ, ծավալը 90 $մ^3$),

գ՝ Ապարան համայնքի Երնջատափ բնակավայրի տարածքում առկա են փլուզման և քարաթափման երկու տեղամասեր՝ Հ4 հանրապետական նշանակության ավտոճանապարհի Հարթավան-Երնջատափ ճանապարհահատվածի 4,3 կմ-ի աջակողմյան հատված (լանջի պարամետրերն են՝ թեքությունը 50^0, բարձրությունը 40 մ, երկարությունը 700 մ, հնարավոր փլուզման ենթակա զանգվածի պարամետրերն են՝ խորությունը 1 մ, լայնությունը 20 մ, երկարությունը 300 մ, ծավալը 6000 $մ^3$), Հ4 հանրապետական նշանակության ավտոճանապարհի Հարթավան-Երնջատափ ճանապարհահատվածի 5-րդ կմ-ի աջակողմյան հատված (լանջի պարամետրերն են՝ թեքությունը 60^0, բարձրությունը 40 մ, երկարությունը 150 մ, հնարավոր փլուզման ենթակա զանգվածի պարամետրերն են՝ խորությունը 1 մ, լայնությունը 20 մ, երկարությունը 80 մ, ծավալը 1600 $մ^3$),

դ՝ Օհանավան համայնքի տարածքում առկա է փլուզման և քարաթափման մեկ տեղամաս, որը գտնվում է Օհանավանի ձոր տանող ճանապարհին (լանջի պարամետրերն են՝ թեքությունը 45^0, բարձրությունը 60-100 մ, երկարությունը 2000 մ, հնարավոր փլուզման ենթակա զանգվածի պարամետրերն են՝ խորությունը 2 մ, լայնությունը 10 մ, երկարությունը 500 մ, ծավալը 10000 $մ^3$),

ե՝ Կարբի համայնքի տարածքում առկա է փլուզման և քարաթափման մեկ տեղամաս, որը գտնվում է Կարբիի ձոր տանող ճանապարհին՝ Կարբի-Նոր Երզնկա ճանապարհի 1-ին կմ-ի ձախակողմյան հատվածում (լանջի պարամետրերն են՝ թեքությունը 60^0-90^0, բարձրությունը 80 մ, երկարությունը 500 մ, հնարավոր փլուզման ենթակա զանգվածի պարամետրերն են՝ խորությունը 2 մ, լայնությունը 10 մ, երկարությունը 300 մ, ծավալը 6000 $մ^3$),

զ՝ Աղձք համայնքի տարածքում առկա է փլուզման և քարաթափման մեկ տեղամաս, որը գտնվում է գյուղի վերնամասից դեպի ձոր տանող ճանապարհին (լանջի պարամետրերն են՝ թեքությունը 70^0, բարձրությունը 70 մ, երկարությունը 700 մ, հնարավոր փլուզման ենթակա զանգվածի պարամետրերն են՝ խորությունը 1 մ, լայնությունը 7 մ, երկարությունը 200 մ, ծավալը 1400 $մ^3$):>>

12) II գլխի 5-րդ բաժնի 5՝1՝ ենթաբաժնի 8-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ.

<<8) ԱՆՏԱՌԱՅԻՆ ՀՐԴԵՀՆԵՐԻ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ ՎՏԱՆԳԱՎՈՐ ՏԱՐԱԾՔՆԵՐԸ.

ա. մարզի տարածքում անտառային գոտիները տարածվում են Արագած լեռան, Արա լեռան և Ծաղկունյաց լեռնաշխթայի լանջերին, զբաղեցնում են 10848 հա տարածք, հիմնական ծառատեսակներն են՝ արևելյան գաճաճ կաղնիները, սոճիները, կաղամախիները և կեչիները,

բ. մարզի անտառային գոտիների պահպանումն իրականացնում է <<Հայանտառ>> ՊՈԱԿ <<Արագածոտնի անտառտնտեսություն>> մասնաճյուղն իր Արագածի, Երնջատափի և Բյուրականի անտառպետությունների անտառապահների միջոցով,

գ. Արագածի անտառպետությունը բաժանված է 16 պահաբաժինների, զբաղեցնում է 4402 հա տարածք և տարածվում է Ապարան, Ալագյազ և Ծաղկահովիտ համայնքների վարչական տարածքներում,

դ՝ Երնջատափի անտառպետությունը բաժանված է 8 պահաբաժինների, զբաղեցնում է 2824 հա տարածք և տարածվում է Ապարան համայնքի վարչական տարածքում, ինչպես նաև Արա լեռան հյուսիսային լանջերին,

ե՝ Բյուրականի անտառպետությունը բաժանված է 5 պահաբաժինների, զբաղեցնում է 3622 հա տարածք, որից 1080 հա գտնվում է Թալին համայնքի վարչական տարածքին հարակից և հարուստ չէ անտառաշերտով, իսկ մնացած 2542 հա անտառաշերտը գտնվում է Բյուրական համայնքից 3-7 կմ դեպի հյուսիս և հյուսիս-արևելք:>>

2. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի 2014 թվականի ապրիլի 28-ի N 42-Ա որոշմամբ հաստատված հավելված N 1-ի՝ <<Արտակարգ իրավիճակներում Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի բնակչության պաշտպանության պլան>>-ի աղյուսակ 1-ը փոխարինել նոր լրամշակված տարբերակով՝ համաձայն հավելված 1-ի:

3. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի 2014 թվականի ապրիլի 28-ի N 42-Ա որոշմամբ հաստատված հավելված N 1-ի՝ <<Արտակարգ իրավիճակներում Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի բնակչության պաշտպանության պլան>>-ի աղյուսակ 2-ը փոխարինել նոր լրամշակված տարբերակով՝ համաձայն հավելված 2-ի:

4. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի 2014 թվականի ապրիլի 28-ի N 42-Ա որոշմամբ հաստատված հավելված N 1-ի՝ <<Արտակարգ իրավիճակներում Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի բնակչության պաշտպանության պլան>>-ի աղյուսակ 3-ը փոխարինել նոր լրամշակված տարբերակով՝ համաձայն հավելված 3-ի:

5. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի 2014 թվականի ապրիլի 28-ի N 42-Ա որոշմամբ հաստատված հավելված N 1-ի՝ <<Արտակարգ իրավիճակներում Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի բնակչության պաշտպանության պլան>>-ի աղյուսակ 4-ը փոխարինել նոր լրամշակված տարբերակով՝ համաձայն հավելված 4-ի:

6. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի 2014 թվականի ապրիլի 28-ի N 42-Ա որոշմամբ հաստատված հավելված N 1-ի՝ <<Արտակարգ իրավիճակներում Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի բնակչության պաշտպանության

պլան>>-ի աղյուսակ 5-ը փոխարինել նոր լրամշակված տարբերակով՝ համաձայն հավելված 5-ի:

7. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի 2014 թվականի ապրիլի 28-ի N 42-Ա որոշմամբ հաստատված հավելված N 1-ի՝ <<Արտակարգ իրավիճակներում Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի բնակչության պաշտպանության պլան>>-ի աղյուսակ 6-ը փոխարինել նոր լրամշակված տարբերակով՝ համաձայն հավելված 6-ի:

8. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի 2014 թվականի ապրիլի 28-ի N 42-Ա որոշմամբ հաստատված հավելված N 1-ի՝ <<Արտակարգ իրավիճակներում Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի բնակչության պաշտպանության պլան>>-ի աղյուսակ 7-ը փոխարինել նոր լրամշակված տարբերակով՝ համաձայն հավելված 7-ի:

X

ԴԱՎԻԹ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Подписано: GEVORGYAN DAVIT 3203910713

Դ.ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2021թ. մայիսի 11 **N** 91

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 2-Ի N 64-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ՏԱՐԱՀԱՆՎԱԾ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԿԵՆՍԱԱՊԱՀՈՎՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՊԼԱՆԻ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ կետով, 33-րդ հոդվածի 1-ին կետով, 34-րդ հոդվածի 1-ին կետով և հիմք ընդունելով <<Տարածքային կառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ կետը.

Ո ր ո շ ու մ ե մ՝

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի 2014 թվականի հուլիսի 2-ի <<Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի տարահանված բնակչության կենսաապահովման գործընթացի նախապատրաստման մարզային պլանը հաստատելու մասին>> N 64-Ա որոշման հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները.

1) I բաժնի 4-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ՝

<<**4. Պլանի իրավական հիմքերը՝**

1) Պլանի իրավական հիմքերն են՝

ա. <<Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենք.

բ. <<Քաղաքացիական պաշտպանության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենք.

գ. <<Փրկարար ծառայության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենք.

դ. <<Ոստիկանության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենք.

ե.<<Պետական նյութական պահուստի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենք.

զ. <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենք.

է. Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հուլիսի 24-ի <<Տարահանված բնակչության տեղաբաշխման տեղամասերում կենսաապահովման կարգը հաստատելու մասին>> N 824-Ն որոշում.

ը. Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի օգոստոսի 18-ի <<Վտանգավոր տարածքից բնակչության տարահանման կարգը հաստատելու մասին>> N 1180-Ն որոշում.

թ. Հայաստանի Հանրապետության կառավարության 2000 թվականի սեպտեմբերի 28-ի <<Բնակչության պատսպարման կարգը հաստատելու մասին>> N 592 որոշում.

ժ. Հայաստանի Հանրապետության կառավարության 2000 թվականի հոկտեմբերի 25-ի <<Բնակչությանը անհատական պաշտպանության միջոցներով ապահովելու կարգը հաստատելու մասին>> N 679 որոշում.

ժա. Հայաստանի Հանրապետության կառավարության 2017թ. ապրիլի 6-ի <<Հայաստանի Հանրապետության տարածքում արտակարգ իրավիճակների առաջացման կամ դրա սպառնալիքի, Հայաստանի Հանրապետության վրա զինված հարձակման, դրա անմիջական վտանգի առկայության կամ պատերազմ հայտարարելու դեպքում ու ռազմական դրության պայմաններում պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների, բնակչության ազդարարման և իրազեկման կարգը սահմանելու մասին>> 346-Ն որոշում՝

ժբ. Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի հուլիսի 29-ի <<Ճառագայթային, քիմիական ու մանրէաբանական իրավիճակի մշտական հսկողության համակարգի ստեղծման և գործունեության ապահովման կարգը սահմանելու մասին>> N 1064-Ն որոշում.

ժգ. Հայաստանի Հանրապետության կառավարության 2015թ. հունվարի 22-ի <<Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության ոլորտներում Հայաստանի Հանրապետության պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների ու կազմակերպությունների պատրաստման և տվյալ ոլորտների հիմնահարցերով բնակչության ուսուցման կարգն ու ծրագիրը սահմանելու մասին>> N 46-Ն որոշում>>:

2) II բաժնի 5-րդ կետի 4-րդ ենթակետի առաջին նախադասությունը շարադրել նոր խմբագրությամբ՝

<<Հատկապես բարդ իրադրություն կստեղծվի Աշտարակ, Ուշի, Կարբի, Օհանավան, Արտաշավան համայնքներում և Հարթավան, Շողակն, Վարդենուտ, Վարդենիս, Ծաղկաշեն, Արագած, Քուչակ, Եղիպատրուշ, Շենավան բնակավայրերում>>:

3) II բաժնի 5-րդ կետի 5-րդ ենթակետը շարադրել նոր խմբագրությամբ՝

<<Ավերիչ երկրաշարժի ազդեցության գոտում կհայտնվեն 5152 շենքեր և շինություններ, որոնցում բնակվում է 41714 մարդ: Բնակչության շրջանում ընդհանուր կորուստները կկազմեն 3256 մարդ, որոնցից անվերադարձ՝ 1870 մարդ, սանիտարական՝ 1386 մարդ, այդ թվում՝ ծանր վիրավորներ՝ 698 մարդ, միջին ծանրության վիրավորներ՝ 374 մարդ և թեթև վիրավորներ՝ 313 մարդ>>:

4) II բաժնի 5-րդ կետի 6-րդ ենթակետը շարադրել նոր խմբագրությամբ՝

<<Երկրաշարժի հետևանքով կստեղծվի հետևյալ ինժեներական իրավիճակը՝ վնասված շենքեր՝ 5152 հատ, որոնցից 1-ին կարգ՝ թեթև վնասվածք կստանա 46 շինություն, 2-րդ կարգ՝ միջին վնասվածք կստանա 420 շինություն, 3-րդ կարգ՝ ծանր վնասվածք կստանա 429 շինություն, 4-րդ կարգ՝ մասամբ կքանդվի 1559 շինություն, 5-րդ կարգ՝ լրիվ կփլվի 2698 շինություն, խոշոր հրդեհներ՝ 5 հատ, խոշոր վթարներ կոմունալ-էներգետիկ ցանցում՝ 20 հատ, փլվածքներով փակված փողոցներ՝ 37 կմ, փլատակների մակերեսը կկազմի 78518 քառ. մ, իսկ ծավալը՝ 6687325 խոր. մ:>>

5) II բաժնի 5-րդ կետի 9-րդ ենթակետում <<3037>> թիվը փոխարինել <<2859>> թվով:

6) II բաժնի 5-րդ կետի 12-րդ ենթակետը շարադրել նոր խմբագրությամբ.

<<Մարզում տարահանումն իրականացվում է հետևյալ երթուղիներով.

ա) Նոր Ամանոս համայնքից ենթակա է տարահանման ամբողջ բնակչությունը՝ 646 մարդ, բնակչությունը տարահանվում է Արուճ համայնք, որի բնակչության թիվը կազմում է 926 մարդ, Նոր Ամանոս-Արուճ երթուղով,

բ) Արագածոտն համայնքից ենթակա է տարահանման ամբողջ բնակչությունը՝ 904 մարդ, բնակչությունը տարահանվում է Կոշ համայնք, որի բնակչության թիվը կազմում է 2300 մարդ, Արագածոտն-Կոշ երթուղով,

գ) Նոր Եդեսիա համայնքից ենթակա է տարահանման ամբողջ բնակչությունը՝ 1309 մարդ, բնակչությունը տարահանվում է ՈՒջան համայնք, որի բնակչության թիվը կազմում է 2006 մարդ, Նոր Եդեսիա-Արագածոտն-ՈՒջան երթուղով>>:

X

ԴԱՎԻԹ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Подписано: GEVORGYAN DAVIT 3203910713

Դ.ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 մայիսի 2021 թվական N 90

ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասովև հիմքընդունելով «Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետականբյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասը՝*որոշում եմ.*

1.ՀայաստանիՀանրապետության Արագածոտնի մարզպետարանի բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Այլ նպաստներ բյուջեից» հոդվածով նախատեսված ծախսերից սոցիալական աջակցության նպատակով 3 քաղաքացիների հատկացնել 340 000/երեք հարյուր քառասուն հազար/ դրամ միանվագ օգնություն՝ համաձայն հավելվածի:

2.Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի գլխավոր ֆինանսիստին՝ հանձնարարել ՖՍՏՋ վարչության հաշվապահական հաշվառման բաժնին՝ օրենքով սահմանված կարգով, 5 օրյա ժամկետում կատարել գումարի վճարում:

X

ԴԱՎԻԹ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Подписано: GEVORGYAN DAVIT 3203910713

Դ.Գևորգյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 89

06 մայիսի 2021թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ 100 ՏՈԿՈՍ ՊԵՏՈՒԹՅԱՆԸ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԲԱԺՆԵՄԱՍ ՈՒՆԵՑՈՂ «ԹԱԼԻՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՎՃԱՐՈՎԻ ՍԿԶԲՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՀԻՎԱՆԴԱՆՈՑԱՅԻՆ, ԱՐՏԱՀԻՎԱՆԴԱՆՈՑԱՅԻՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԻ ՈՒ ՍԱԿԱԳՆԵՐԻ ՑՈՒՑԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ՈՒ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՀԱՇԻՎԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» օրենքի 16-րդ հոդվածի 11-րդ մասի 3-րդ կետով, «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքի 83-րդ հոդվածի 1-ին մասով, 84-րդ հոդվածի 1-ին մասի «իբ»-«իդ» կետերով, հաշվի առնելով «Թալինի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրենի 27 ապրիլի 2021թ. թիվ 113 գրությունը, որոշում եմ.

1. Հաստատել՝

«Թալինի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության 2021թվականի՝

1.1. եկամուտների և ծախսերի նախահաշիվը համաձայն N1 հավելվածի

1.2. հաստիքացուցակը՝ համաձայն N2 հավելվածի

1.3. վճարովի սկզբունքով տրամադրվող ծառայությունների, հիվանդանոցային, արտահիվանդանոցային բժշկական օգնության և սպասարկման տեսակների ու սակագների ցուցակը համաձայն N3 հավելվածի

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և տարածվում է 2021 թվականի հունվարի 1-ից սկսած իրավահարաբերությունների վրա:

X

ԴԱՎԻԹ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Подписано: GEVORGYAN DAVIT 3203910713

Դ. ԳԵՎՈՐԳՅԱՆ